

# **««ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

----- 2021 թվականի N .... -

#### **««ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԻ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՊԵՐՈՒ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասը, 73-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Հավանություն տալ ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը համարելանհետաձգելի և սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՆԱԽԱԳԻԾ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

### **«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5) **հանրակրթության պետական չափորոշիչ**՝ նորմատիվ փաստաթուղթ, որը սահմանում է սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները՝ ըստ կրթական աստիճանների, սովորողների գնահատման համակարգի սկզբունքները, տարրական, հիմնական և

միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, և հանրակրթական միջնակարգ կրթության ծրագրի շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաներ)»:

**6) հանրակրթական ծրագիր (հիմնական և լրացուցիչ)**՝ հանրակրթության նպատակների իրականացմանն ուղղված ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջությունն է:

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6.3-րդ կետով.

**«6.3) այլընտրանքային կրթական ծրագիր՝**

**ա. հեղինակային կրթական ծրագիր՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխանող կրթական ծրագիր.

**բ. փորձարարական կրթական ծրագիր՝** հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան և սույն օրենքով սահմանված՝ առավելագույնը տվյալ կրթական աստիճանի տևողությամբ ներդրված կրթական ծրագիր.

**գ. միջազգային կրթական ծրագիր՝** միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը և ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող կրթական ծրագիր:»:

3. 10-րդ կետից հանել «, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող» բառերը:

4. 10.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«10.2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝** խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ:»:

5. Ուժը կորցրած ճանաչել 10.7-րդ կետը.

6. 14.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«14.2) որակավորման տարակարգ՝** ուսուցչի մասնագիտական չափորոշիչն համապատասխանող որակավորման աստիճան:»:

• Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.3-րդ և 14.4-րդ կետերով՝

**«14.3) մասնագիտական չափորոշիչ՝** ուսուցչի մասնագիտական գիտելիքների, կարողությունների, պատասխանատվության և վարքագծի նկարագիր.

**14.4) դասագիրք՝** հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին

համապատասխան՝ տվյալ հանրակրթական առարկայի կամ դրա մի մասի հիմնական բովանդակությամբ թղթային կամ էլեկտրոնային գիրք».

- Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ կետով՝

«16) **ուսումնադաստիարակչական գործառույթ՝** հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողների կողմից իրականացվող ուսումնական և դաստիարակչական գործընթացների մշակմանը, կազմակերպմանը, իրականացմանը և համակարգմանն ուղղված աշխատանքներ:»:

## **Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի՝

- 1) ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչները.
- 2) ուսումնական պլանների ընդհանրական կառուցվածքը և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները.
- 3) սովորողների գնահատման սկզբունքներն ու ձևերը.
- 4) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները (կոմպետենցիաներ) և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:»:

2. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը ներառում է ուսումնական բնագավառները, ըստ կրթական աստիճանների՝ դրանց հատկացվող ժամաքանակները, սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը՝ ըստ կրթական աստիճանների:»:

## **Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

- 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հանրակրթական հիմնական ծրագրերն ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջությունն է, որն ապահովում է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված՝ շրջանավարտներին ներկայացվող նվազագույն որակական պահանջները, կարողունակություններն ու վերջնարդյունքներն՝ ըստ կրթական աստիճանների:»:

## 2. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հանրակրթական պետական ծրագրի ուսումնական պլանը կազմված է պետական, դպրոցական և անհատական (ընտրովի) հետևյալ բաղադրիչներից.

1) պետական բաղադրիչը ներառում է առարկայացանկը և դրան հատկացվող ժամաքանակները.

2) դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է ուսումնական հաստատության կողմից սահմանված առարկաներին, ինչպես նաև կարող է հատկացվել պետական բաղադրիչով սահմանված առարկաներին: Ուսումնական հաստատության կողմից սահմանված առարկաների ծրագրերը սահմանված կարգով երաշխավորվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

3) անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանվում են տվյալ դասարանի հետազոտական աշխատանքներին, խմբակներին հատկացված նվազագույն ժամաքանակները:»:

## 3. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով՝

«5.1. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի հիման վրա մշակում և հաստատում է իր ուսումնական պլանը:»:

4. 7-րդ մասի վերջին պարբերությունից հանել «Հանրակրթական ծրագրի նախորդ աստիճանը չյուրացրած սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթության հաջորդ աստիճան:» նախադասությունը:

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

### **«Հոդված 10. Ուսումնական հաստատության կառավարումը**

1. Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

- Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Կոլեգիալ կառավարման մարմինը կարող է ձևավորվել ինչպես առանձին հաստատության, այնպես էլ մի քանի հաստատության համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ուսումնադաստիարակչական մասով՝

ուսումնական մասի տնօրենը և վարչատնտեսական մասով՝ վարչատնտեսական մասի ղեկավարը, որոնք նշանակվում և ազատվում են (նրանց լիազորությունները դադարում են) օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

- Ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի ղեկավարումը իրականացվում է ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի ղեկավարի կողմից: Պետական ուսումնական հաստատության վարչատնտեսական արդյունավետ ղեկավարման նպատակով համապատասխան լիազոր մարմնի կողմից պետական ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի ղեկավարումը կարող է իրականացվել կենտրոնացված ձևով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգումն ու մեթոդական ղեկավարումն իրականացվում է ուսումնական մասի տնօրենի կողմից:
- Ուսումնական հաստատության կառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

7. Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենի նշանակման գործընթացում: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

- Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

## **«Հոդված 11. Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորություններն ու դրանց դադարեցման հիմքերը**

1. Պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝

- հաստատում է ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները.
- աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է

զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և դրա կատարման արդյունքներով որոշում ընդունում ուսումնական մասի տնօրենին անվստահություն հայտնելու հարցի քննարկման վերաբերյալ.

- քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին
- քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները.
- որոշում է մասնակցել արտաքին գնահատման, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.
- առաջարկություններ է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.
- հաստատում է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ ընտրում է խորհրդի նախագահ.
- իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ.
- սույնհոդվածի 1-ին մասի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետերով սահմանված իմքերի առկայության դեպքում խորհրդի անդամների (մանկավարժական և ծնողական խորհուրդների դեպքում միայն սվյալի հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված անդամների) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ որոշում է անվստահություն հայտնել ուսումնական մասի տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամ կետ դադարեցնելու մասին հիմնավորված առաջարկությամբ դիմում է համապատասխան լիազորմարմնի ղեկավարին:

## 2. Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամը պարտավոր է՝

1) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության.

2) պատշաճորեն կատարել սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված և խորհրդի որոշումներով (հանձնարարականներով) իրեն վերապահված պարտականությունները.

3) կատարել խորհրդի, իրեն ներկայացրած՝ լիազոր մարմնի այն հանձնարարությունները, որոշումները, որոնք բխում են ուսումնական հաստատության կանոնադրական նպատակներից:

## 3. Պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են լիազորված մարմնի կողմից՝

1) այդ մասին անձնական դիմում ներկայացնելու,

2) անդամին լիազորած մարմնի հիմնավորված հետկանչի,

3) խորհրդի որոշմամբ՝ հիմնավորված առաջարկության,

- 4) մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երեք նիստի չներկայանալու,
- 5) դատական կարգով անգործունակ կամ անհայտ բացակայող կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու,
- 6) ուսումնական հաստատության լուծարման կամ վերակազմակերպման,
- 7) խորհրդի կազմում սահմանված կարգի խախտմամբ ընդգրկված լինելու,
- 8) մանկավարժական կամ ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամների՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանած պահանջներին այլևս չբավարարելու,
- 9) նրա մահվան դեպքերում:

## **Հոդված 12. Ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենը, վարչատնտեսական մասի ղեկավարը և նրանց իրավասությունները**

1. Պետական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենը և վարչատնտեսական մասի ղեկավարը նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով:
2. Ուսումնական մասի տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը: Բացառություն կարող են կազմել սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների ղեկավարները:
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է դիմել այն անձը, որն ունի մանկավարժի որոկավորմամբ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի և կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:
4. Հավաստագրումը անցկացվում են հետևյալ փուլերով.
  - փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի.
  - մասնակցության վերապատրաստումներին՝ դիմողի նախաձեռնությամբ.
  - քննություն՝ թեստավորման միջոցով.
  - ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրում՝ 3 տարի ժամկետով:
5. Քննությունների և հավաստագրման ընթացակարգերը, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման դեպքերն ու ընթացակարգը, ինչպես նաև հավաստագրման լիազոր մարմնի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված



մարմինը:

6. Սահմանված կարգով քննություն հանձնած անձը ճանաչվում է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած:
7. Հավաստագրված անձանց ցանկը հրապարակվում է:
8. Քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:
9. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձը կարող է հավաստագիրը ստանալու օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, մասնակցել ուսումնական մասի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին:
10. Ուսումնական մասի տնօրենի թափուր տեղի համար ուսումնական մասի տնօրենի թեկնածուն տվյալ հաստատության խորհրդին ներկայացնում է՝
  - սահմանված ցանկին համապատասխան փաստաթղթերը.
  - ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը.
  - ուսումնական հաստատության 3 տարվա զարգացման իր ծրագիրը:
11. Սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքած պետական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենը պաշտոնավարում է մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի երեքամյա ժամկետի լրանալուց:
12. Պաշտոնավարման ընթացքում պետական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենը յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ անցնում է ատեստավորում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
13. Ատեստավորման արդյունքներով պաշտոնին համապատասխանության մասին եզրակացություն ստանալու դեպքում ուսումնական մասի տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը երկարացվում է 3 տարի ժամկետով, ինչից հետո 1 ամսվա ընթացքում վերջինս խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության՝ հաջորդ 3 տարվա զարգացման իր ծրագիրը և դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը:
14. Ատեստավորման արդյունքներով պաշտոնին անհամապատասխանության մասին ստացած եզրակացությունը հիմք է ուսումնական մասի տնօրենի պաշտոնավարության և հավաստագրի գործողության դադարեցման համար:
15. Ատեստավորման արդյունքներով պաշտոնին անհամապատասխանության մասին եզրակացության դեպքում տվյալ անձը ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրեն կարող է նշանակվել միայն սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար սահմանված կարգով քննություն հանձնելու և հավաստագիր ստանալու դեպքում:
16. Ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենը

(հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը) պատասխանատու է հանրակրթության պետական կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործառույթի կազմակերպման, սովորողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման, իր կողմից ներկայացված դպրոցի զարգացման ծրագրի կատարման, ինչպես նաև օրենքով հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների բարելավողության կանոններով (վարքականոն) սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

17. Պետական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենի կողմից սույն հոդվածի 16-րդ մասով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հիմքերի առկայությունը հիմք է լիազոր մարմնի կողմից ուսումնական մասի տնօրենի պաշտոնավարությունը դադարեցնելու համար:

18. Ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրեն (հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար) չի կարող առաջադրվել, նշանակվել այն անձը, որը`

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
- տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
- դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

19. Պետական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրեն կարող է նշանակվել այն անձը, ով ունի ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի):

20. Ուսումնական մասի տնօրենը`

1) ղեկավարում է մանկավարժական խորհրդի և առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները:

2) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ.

3) պատասխանատու է հաստատությունում ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների` կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և

հմտությունների պատշաճ մակարդակի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող աշխատողներին մեթոդական շարունակական օժանդակության ապահովման համար:

4) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

5) խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը.

6) իրականացնում է օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:»

- Պետական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի ղեկավար կարող է լինել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) և կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ վերջին յոթ տարվա ընթացքում:
- Պետական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի ղեկավարը՝
  - լիազոր մարմին է ներկայացնում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.
  - աջակցում է ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին.
  - կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում պետական լիազորված մարմին.
  - իրականացնում է օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:»

#### **Հոդված 5.** Օրենքի 15-րդ հոդվածի

1. 1-ին մասում «սեպտեմբերի 1-ից» բառերից հետո լրացնել «և ավարտվում է օգոստոսի 31-ին» բառերով:
2. 3-րդ մասում «հենքային ուսումնական պլանով» բառերը փոխարինել «ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքով» բառերով:

#### **Հոդված 6.** Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «տնօրենի» բառից առաջ լրացնել «ուսումնական մասի» բառերը:

- 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ կետերով.

«3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվողների երեխաներին.

4) տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներքին գործուղման հետևանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին :»:

- 10-րդ մասում «տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու» բառերը փոխարինել «տվյալ ուսումնական տարվա ծրագրի բաց թողնված կյուրը լրացնելու» բառերով:

### **Հոդված 7.** Օրենքի 17.1-ին հոդվածում՝

- 1-ին մասի 1-ին կետում «դպրոցական մակարդակ» բառերը փոխարինել «ուսումնական հաստատության մակարդակ» բառերով:
- Ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասը:

3. 5-րդ մասում՝

- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) ուսումնական հաստատություններին տրամադրում է խորհրդատվություն.»:

- 5-րդ կետում «անցկացնում են» բառից հետո լրացնել «սեմինարներ, ինչպես նաև իրենց սպասարկման տարածքում գտնվող հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների և մասնագետների» բառերը:
- 6-րդ մասում՝
- 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) սահմանում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման միասնական մոտեցում և մշակում է մեթոդական ուղեցույցներ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների վերաբերյալ.»:

- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին կետով՝

«3.1) մշտադիտարկում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների աշխատանքները.»:

- 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6) համակարգում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում առկա «Տվյալների բազա» բաժնի կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների տեղեկատվական համակարգը, իրականացնում տվյալների վերլուծություն և տալիս առաջարկություններ՝ քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ.»:

#### **Հոդված 8.** Օրենքի 17.2-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը» բառերից հետո լրացնել նոր՝ «կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա» բառերով:
- 3-րդ մասում «շփման» բառերը փոխարինել «կենսագործունեության» բառով:

**Հոդված 9.** Օրենքի 17.3-րդ հոդվածի 3-րդ մասում «ծառայություններ» բառից հետո հանել «իսկ սույն օրենքի 35-րդ հոդվածի 3.1-ին կետով սահմանված դեպքում տրվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ համաձայն նույն հոդվածի 3.2-րդ կետի պայմանների» բառերը:

**Հոդված 10.** Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### **«Հոդված 26. Ուսուցիչը, նրա վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը**

1. Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել լայնանձր, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:
2. Առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի ֆաի ուրտեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձի կողմից համալրվելու դեպքում ուսուցչի տվյալ ֆաի ուրտեղի համար կարող է դիմել նաև տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն և մանկավարժական հոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով առնվազն երեսուկերեդի տիտ հավաքած անձը: Դասընթացը կարող է կազմակերպվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ լիազորված մարմնի հաստատած կրթական ծրագրով (մոդուլով):
3. Չբաղեցրած պաշտոնի նկարագրի ուսուցչի համապատասխանության որոշման նպատակով պետությունն իրականացնում է ուսուցչի հերթական ատեստավորում՝ յուրաքանչյուր ուսուցչի համար 5 տարի նմեկանգամ: Մինչև սահմանված ժամկետի լրանալը ուսուցիչը կարող է իր նախածեռնությամբ և իր միջոցներով վերապատրաստվել և դիմել ատեստավորման, բայց ոչ չուտ, քան հերթական ատեստավորումից մեկ տարի հետո:
4. Յուրաքանչյուր տարի ուսումնական հաստատության ուսուցիչներին մեկի ին գերորդը նթական է ատեստավորման՝ ըստ ուսումնական հաստատության հաստատած ժամանակացույցի:

5. Ուսուցչի ատեստավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
6. Ուսուցչի վերապատրաստման, տարակարգի շնորհման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների և դասընթացների ցանկի ձևավորման [կարգը](#)՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
7. Ուսումնական մասի տնօրենը յուրաքանչյուր տարվա համար կազմում և հաստատում է տվյալ տարվա հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան:
8. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը չուշ, քան երեք ամիս առ աջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:
9. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ուսումնական հաստատության միջոցների հաշվին սահմանված անցում է վերապատրաստում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած վերապատրաստման չափորոշիչներին համապատասխան:
10. Ուսուցչի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները և նվազագույն չափաքանակը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
11. Ատեստավորման հանձնաժողովի՝ ուսուցչի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է ուսուցչի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:
12. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն, և ուսուցչի ազատումը հետաձգվում է մինչև հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելը:
13. Զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում անձը չի գրկվում մանկավարժական գործունեության մագրադվելու Լիրավունքից:
14. Ատեստավորման ենթակա է՝
  - տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ուսուցիչը.
  - հղի և մինչև երեք տարեկան երեխայի իսամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը, եթե նա մասնախառն չի ներկայացրել:
15. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի իսամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ենթակա է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց չուշ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտջին ներկայացրել:
16. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ձևաչված ուսուցիչը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորս ամսյա ժամկետում:
17. Կրթական քաղաքականության փոփոխման դեպքում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կարող է կազմակերպել ուսուցիչների արտահերթ արտադիր վերապատրաստում պետական բյուջեի կամ այլ միջոցների հաշվին:

18. Ատեստավորված ուսուցիչը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել ուսուցչի որակավորման տարակարգիչ նոր հիման գործընթացին: Ուսուցչի որակավորման տարակարգը քառաստիճան է և նորի վրա է ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին համապատասխան:
19. Ուսուցչի որակավորման տարակարգիչ նոր հիման մասին որոշումներն ընդունվում է պարզընթացակարգով՝ փաստաթղթային եղանակով, ուսուցչի տարակարգիչ նոր հիման հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանրապետական հանձնաժողով) կողմից: Հանրապետական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
20. Ուսուցչի որակավորման տարակարգերը համապատասխանում են ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ուսուցչի գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների և ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական աշխատանքային ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգևատրումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները և այլն):
21. Ուսուցչի գիտելիքների գնահատման և սահմանափակումն առաջանալու է պքում տվյալ ուսուցիչը կարող է իր նախաձեռնությամբ անցնել գիտելիքների գնահատում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունում:
22. Հանրապետական հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- ենթակա է համապատասխան որակավորման տարակարգիչ նոր հիման:
- ենթակա է համապատասխան որակավորման տարակարգիչ նոր հիման:
  23. Հանրապետական հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կամ դատական կարգով:
  24. Հանրապետական հանձնաժողովի որոշումը հիմք է կրթության պետական կառավարման մարմնի կողմից ուսուցչի որակավորման համապատասխան տարակարգիչ նորի ելուն և հավելավճար սահմանելու համար:
  25. Որակավորման տարակարգ ստացած ուսուցչին տրվում է համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:
  26. Բողոքի առկայության դեպքում ուսուցչին տարակարգիչ նորի ելուն և հավելավճար սահմանելու համար:
  27. Որակավորման տարակարգի համար տրվող հավելավճարը դադարեցվում է, եթե տվյալ ուսուցիչը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:
  28. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխվող ուսուցչի որակավորման տարակարգը պահպանվում է:
  29. Ոչ պետական ուսումնական հաստատության ուսուցիչը կարող է

կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով մասնակցել տարակարգի շնորհման գործընթացին՝ հիմնադրի ֆինանսական միջոցների հաշվին:»

#### **Հոդված 11.** Օրենքի 27-րդ հոդվածի՝

- 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 13.1-ին կետով՝

«13.1) ինքնուրույն և իր միջոցներով մասնակցելու վերապատրաստումների.»:

- 2-րդ մասի՝
- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) ապահովել սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներով նկարագրված գիտելիքը, հմտությունները, արժեքները և դիրքորոշումները, նպաստել կարողունակությունների ձևավորմանը.»:

- 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8) պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, ներքին կարգապահական կանոններով և ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոններով (վարքականոն) սահմանված պահանջները, ուսումնադաստիարակչական գործառույթները.»:

- լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 9.1-ին կետով՝

«9.1) ըստ իրենց իրականացրած գործառույթների (հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրեն, վարչատնտեսական մասի ղեկավար, ուսումնական մասի տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ)՝ երեք տարին մեկ պարտադիր մասնակցել վերապատրաստումների»:

#### **Հոդված 12.** Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3.1-ին կետով՝

«3.1) սահմանում է այլընտրանքային (հեղինակային, փորձարարական և միջազգային) կրթական ծրագրերի փորձաքննության անցկացման և հաստատման կարգը.»:

- 6-րդ կետում «տնօրենի ընտրության (նշանակման)» բառերը փոխարինել «ուսումնական մասի տնօրենի նշանակման» բառով:

#### **Հոդված 13.** Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 6-րդ կետում «խորհրդի ձևավորման կարգը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ կրթահամալիրի, որի խորհրդի ձևավորման կարգը սահմանվում է կրթահամալիրի կանոնադրությամբ.» բառերը:



- 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով նշանակում է ուսումնական հաստատության ուսումնական մասի տնօրենին և վարչատնտեսական մասի ղեկավարին՝ հիմնադրի անունից կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 3 տարի ժամկետով» բառերով:

- 7-րդ և 22-րդ կետերում «տնօրենի» բառից առաջ լրացնել «ուսումնական մասի» բառերը:
- 6 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«26.6) սահմանում է ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (վարքականոնը)»:

- 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«26.15) հաստատում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում դասագրքերը և ուսումնական այլ նյութերը գործածության երաշխավորելու կարգը»:

- Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 26.16-րդ, 26.17-րդ, 26.18-րդ, 26.19-րդ, 26.20-րդ և 26.21-րդ կետերով՝

«26.16) սահմանում է ուսուցչի մասնագիտական չափորոշիչները.

26.17) սահմանում է պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման կարգը.

26.18) սահմանում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնական մասի տնօրենների ատեստավորման կարգը.

26.19) սահմանում է ուսումնական հաստատության կողմից դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների երաշխավորման կարգը.

26.20) սահմանում է ատեստավորման ենթակա ուսուցչի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները և նվազագույն չափաքանակը.

26.21) սահմանում է սովորողների տնային ուսուցման կարգը»:

**Հոդված 14.** Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր լիազորության տակ գտնվող ուսումնական հաստատությունների նշանակված ուսումնական մասի տնօրենի և վարչատնտեսական մասի ղեկավարի հետ հիմնադրի անունից կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 3 տարի

ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով վաղաժամկետ դադարեցնում է ուսումնական մասի տնօրենի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը.»:

**Հոդված 15.** Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում «տնօրենը» բառը փոխարինել «վարչատնտեսական մասի ղեկավարը» վառերով:

**Հոդված 16.** Օրենքի 35-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով պետական բյուջեի միջոցներից տրամադրվում է նպատակային ֆինանսավորում: Ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

- Ուժը կորցրած ճանաչել 3.2 մասը:

**Հոդված 17.** Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասը ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

**Հոդված 18.** Սույն օրենքի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված 12-րդ հոդվածի 2-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 10-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման ժամկետ սահմանել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

**Հոդված 19.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: